

Բրիտանոնեայ ԱՅԱՍՏԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՐ Ս. ԷԶՄԱՐԴՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՀԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՆԱՐԱԹԱԹԵՐՈ

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀԸ
ՄԱՅՐ ԱԹՈՐՈՒՄ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ
ԽՈՐՀՐԴԻ
ԸՆԴԱՅՆՎԱԾ ՆԻՍՏ

«ՀԱՎԱՏՔ ԵՒ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ»
ՀԱՄԱՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ



Մայիսի 13-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հունաստանի Ուղղափառ Կոնստանտինոս Ստեֆանուպոլսը՝ ՀՀ արտաքին գործերի նախագահ Վարդան Օսկանյանի ուղեկցությամբ։ Վեհաքահին գահաժառանգի նախագահին եւ հունական պատվիրակության ընդունեց Ն. Ս. Օ. Ս. Ս. Ամենայն Հայոց Գարեգին Ա կաթողիկոսը։ Պատվիրակության կազմում էին Հունաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Գրիգորիս Նիոտիսը, ազգային էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ալեքսանդրոս Բալուսը, պաշտոնաթուղթ այլ անձինք ու գործարարներ։ Համըղայմանը ներկա էին նաեւ Երուսաղեմի պատրիարք Ս. Թորգոմ արք. Մանուկյանը, գերաշնորհ հայրեր։

«Գարավոր պատմական կապեր

ունեն հույն եւ հայ ժողովուրդները՝ սկսած հեղեմական շրջանից մինչեւ Բյուզանդիոն եւ մինչեւ այսօրվա Հունաստան, ուր այսօր ապրում են մեր բազմաթիվ զավակները՝ հպարտ լինելով որպես հույն բաղաճիցներ եւ հպարտ՝ որպես Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցու զավակներ»,- Վեհափառ Հայրապետի ողջույնի խոսքը ուղղված Հունաստանի նախագահին, ընթերցեց Հունաստանի թեմի առաջնորդ Ս. Ոսկան արք. Գալիարյանը։

Վեհափառ Հայրապետն իր խոսքում փաստեց, որ Հունաստանն էր այն երկիրը, որտեղ 1922 թվականի Իզմիրի ջարդերից համըղված գտած բազմաթիվ հայեր։ Վեհափառ Հայրապետն իր երախտը հայտնեց Հունաստանի նախագահին՝ անցյալ տարի

հունական Պաղամենոսի կողմից ապրիլի 24-ը որպես հայոց ցեղասպանության օր հռչակման համար եւ նշեց, որ այն հույն իշխանությունների բարեկամական վերաբերմունքի մի նոր արտահայտություն էր։ Բարեկամության եւս մի արտահայտություն էր անցած տարի Աթենքում՝ Մեղաբունի սրահում, կազմակերպված «Հայաստանի գանձերը» ցուցահանդեսը՝ միլիոնավոր Հայաստանում բրիտանոնությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին։

Նորին Սրբությունն իր ողջույնը հղեց նաեւ Հույն Օրթոդոքս Եկեղեցուն, որի հետ Հայոց Եկեղեցին սերտ հարաբերություններ ունի։

Հունաստանի նախագահը ջերմագին շնորհակալություն հայտնեց հանդիպման համար՝ իր եւ իր ժողովրդի անունից Վեհափառ Հայրապետին մաղթելով շուտափույթ ապաքինում։ Կարեւորելով հանդիպումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ նախագահի հավաստիացրեց, որ այն նոր լիցք կհաղորդի երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը։

«Ընդհանրապետը»,- հանդիպման ավարտին հունարեն տառերով թղթի հանձնեց Վեհափառ Հայրապետը։

Այա Հունաստանի նախագահի, կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ Ս. Գարեգին արք. Ներսիսյանի ուղեկցությամբ, ծանոթացավ Վեհաքահին բանկարանում պահվող գանձերին, այցելեց Մայր տաճարը։

ՄԱՍԼԱԿ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՐՈՒՄ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴԱՅՆՎԱԾ ՆԻՍՏ Ս. ԷԶՄԱՐԴՆԻՍ



Մայիսի 12-15-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն. Ս. Օ. Ս. Ս. Ամենայն Հայոց Գարեգին Առաջին կաթողիկոսի բարձր նախագահությամբ եւ Երուսաղեմի պատրիարք Ս. Թորգոմ արք. Մանուկյանի, Թուրքիոյ հայոց պատրիարք Ս. Մեսրոպ արք. Մուրաֆյանի առեւտրապետության կայացավ Գերագույն հոգեւոր խորհրդի ընդլայնված փակ նիստ։

Մայիսի 12-ին Տերունական աղոթքից հետո Երուսաղեմի պատրիարք Ս. Թորգոմ արք. Մանուկյանը փառք եւ գոհություն հղեց առ Աստված, որ, չնայած առողջական վիճակին, Վեհափառ Հայրապետն ուժ եւ կորով գտավ նախագահելու ժողովը։

Հարադրեց նիստի օրակարգը։ Նա մասնավորապես ասաց. «Այս նստաշրջանի մասնատուր եւ շատ կարեւոր հարցեր են օրակարգի, ինչպէս նաեւ կանոնադրութեան վերաբերյալ հարցեր։ Այս մասին հանգամանօրէն կը զեկուցի Հիւսիսային Ամերիկայի Արեւմտյան թեմի առաջնորդ Ս. Վաչէ արքեպս. Յովսէփեանը։

Երկրորդը պապի այցելութեան հարցերն են։ Այս մասին կը զեկուցի Ս. Խածակ սրբազանը։ Աշխատանքների տեղական յանձնախումբի մասին Յովան սրբազանը։

Երրորդ, 1700-ամեակի մասին, որի մասին յանձնախումբը կը զեկուցի գլխավորութեամբ Ս. Մեսրոպ արքեպս. Աշենանի, նա իր զեկույցը ընդհանրապէս կուտայ ղովը։



Վեհափառ Հայրապետը, ողջունեց նաեւ մեր օրինությունը եւ ջերմ բարեհաճությունները, առողջություն եւ երկար տարիների կյանք Ձերոյ Վեհափառին։

Թող Տերը շնորհի եւ առաջնորդի Ձեզ ավելի ու ավելի բեղուն հասարակական գործունեությունը, վստահ զարգացման, բարգաւաճման հույն մեր բոլոր ժողովրդի եւ Հունական Հանրապետության։

ԳԵՐԱԳԻՐ Ս
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

յանձնախումբի ժողովին։ Իր հայրաքայծ տուեալներուն վրայ եւ շատ ամփոփ զեկույց մը կուտամ։ Այս նիստերի մասին քանի կան պետական յանձնախումբեր, պիտի ցանկանայի, որ պրն. Մուճեանը, որ ներկայ է մեր մէջ, նոյնպէս միանայ զեկույցներին»։

Հարունակությունը՝ էջ 2

Ն. Ս. Օ. Ս. Ս. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԿՈՆՍՏԱՆՏԻՆՈՍ ՍՏԵՖԱՆՈՊՈԼԻՍԻՆ

Նորին վանաշուր պարոն նախագահ Հունաստանի Հանրապետության,

Ողջունում ենք Ձեզ սուրբգրական Արարատ լեռան լանջերից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, որը դարավոր կենտրոնն է հայ ժողովրդի ուղղափառ սուրբ հավատի։ Մեր առաջին լուսավորիչները մեր Տեղ Հիսուս Քրիստոսի առաքյալներ Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոսը, բերել են Ավետարանի լույսը Հայաստան եւ մեր հավատավոր սուրբ հայրերը ընդունել են այն որպես մեր ժողովրդի կենդանության ալիքը։

Գարավոր պատմական կապեր ունեն հույն եւ հայ ժողովուրդները՝ սկսած հեղեմական շրջանից մինչեւ Բյուզանդիոն եւ մինչեւ այսօրվա Հունաստան, ուր այսօր ապրում են մեր բազմաթիվ զավակները՝ հպարտ լինելով որպես հույն բաղաճիցներ եւ հպարտ՝ որպես Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցու զավակներ։ Հայ ժողովուրդը երախտալիցաբար եւ հունա-

կան պետականությամբ, հատկապես այսօրվա հունահայությունը, որը 1922 թվականի Իզմիրի ջարդերից հետո եկավ ու հաստատվեց հյուրընկալ հունական ափերում։

Հույն իշխանությունների բարեկամական վերաբերմունքը մեր տեսանք անցյալ տարի, երբ հունական ժողովրդավարության Պաղամենոն ընդունեց եւ հռչակեց հայոց ցեղասպանության ապրիլի 24-ի օրը, որպես Հայոց Հովվապետ, ընդունեցեք մեր ջերմ շնորհակալություն խոսքը։ Նաեւ մենք սերտ հարաբերություններ ենք մշակում Հույն Օրթոդոքս Եկեղեցու հետ, նրա առաջնորդի եւ հոգեւորականության հետ։

Ընդունեցեք նաեւ մեր բարեհաճությունները ուղղված Հույն Օրթոդոքս Եկեղեցուն, հույն պետականությանը եւ հույն ժողովրդին՝ բարոյություն, զարգացման եւ քաղաքական, գաղափարական ապրելու համար ու արդար կյանքով ապրելու համար. մի արդար կյանք, որի համար տարիներ շարունակ տառապեցինք մեր երկու ժողովուրդները.

բայց փառք Աստծո, այսօր Հայաստան աշխարհը, մեր հայրենիքը եւս, մնալ Հունաստանի Հանրապետության, անկախ հանրապետություն է եւ ձգտում է արժանապատիվ դիմավորել մեր Տեղ Հիսուս Քրիստոսի ծննդյան 2000-ամյակը եւ քրիստոնեությունը մեզանում պետականորեն ընդունելու 1700-ամյակը՝ 2001 թվականին փորձելով վերականգնել գոնե իր կորցրածների մեկ մասը՝ կառուցելով նոր եկեղեցիներ եւ վերականգնելով մեր ազգային մշակույթը։

Հարգելի պարոն նախագահ, ընդունեցեք նաեւ մեր օրինությունը եւ ջերմ բարեհաճությունները, առողջություն եւ երկար տարիների կյանք Ձերոյ Վեհափառին։

Թող Տերը շնորհի եւ առաջնորդի Ձեզ ավելի ու ավելի բեղուն հասարակական գործունեությունը, վստահ զարգացման, բարգաւաճման հույն մեր բոլոր ժողովրդի եւ Հունական Հանրապետության։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԻ ԸՆԴԱՅՆՎԱԾ ՆԻՍՏ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Սկզբը՝ էջ 1

Ժողովի առաջին օրը կարողիկոսական ընդհանուր փոխանորդ Ս. Գարեգին արք. Ներսիսյանը գեկուցեց 1998 թ. օգոստոսից մինչև այս տարվա մարտ ամսանակահատվածում Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի գործունեության մասին: Մայիսի 13-ին՝ Բրիտանիայի Համբարձման տոնին, Գերագույն հոգևոր խորհրդի ծխան ընդմիջեց եւ շարունակվեց մայիսի 14-ին: Առավոտյան ճիստից հետո ժողովի մասնակիցները կարողիկոսական ընդհանուր փոխանորդ Ս. Գարեգին արք. Ներսիսյանի առաջնորդությամբ մեկնեցին Երեւան եւ հանդիպեցին ՀՀ նախագահ Ռոբերտ Բաժարյանի հետ:

Մայիսի 15-ին Գերագույն հոգևոր խորհրդի հյուրը եղավ ՀՀ արտաքին գործերի նախարար Վարդան Ծակաճյանը: Պրն. Ծակաճյանը ժողովակազմներին տեղեկություններ հաղորդեց աշմանր կայանային «Հայաստան-Սփյուռք» համահայկական խորհրդատվորական մասին: Դրանով ընդլայնված ճիստից ավարտեց աշխատանքները, որին մասնակցում էին Գերագույն հոգևոր խորհրդի անդամներ՝ կարողիկոսական ընդհանուր փոխանորդ Ս. Գարեգին արք. Ներսիսյանը, Գեղարքունիքի թեմի առաջնորդ Ս. Ջավեդ արք. Չինչյանը, ԱՄՆ Արեւմտյան թեմի

առաջնորդ Ս. Վաչե արք. Հովսեփյանը, Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի Փարիզի առաջնորդ Ս. Գյուտ արք. Նազաշյանը, Վիրահայր թեմի առաջնորդ Ս. Գեորգ արք. Մերայդարյանը, Մայր Աթոռի դիվանապետ Ս. Ներսես արք. Պողոսյանը, Ծայրագույն արեւելքի հայրապետական պատվիրակ, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի առաջնորդ Ս. Աղան արք. Պալիտյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Ս. Անանի արք. Արարայանը, Ռուսաստանի թեմի առաջնորդ Ս. Տիրան արք. Կյուրեղյանը, Արեւմտահայկ. թեմի առաջնորդ Ս. Գիսակ արք. Մուրադյանը, ԱՄՆ Արեւելյան թեմի առաջնորդ Ս. Խաժակ արք. Պարսամյանը, Արցախի թեմի առաջնորդ Ս. Պարզեմ եպս. Մարտիրոսյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Ս. Արքաիմ եպս. Մկրտչյանը, Ուկրաինայի թեմի առաջնորդ Ս. Նաբան եպս. Հովհաննիսյանը, ինչպես նաեւ Գերագույն հոգևոր խորհրդի աշխարհական անդամներ Գ. Խանջյանը, Պ. Հակոբյանը, Ռ. Պապյանը եւ Վաղիմիր Բարխուդարյանը: Ժողովից մասնակցում էին նաեւ Կանադայի թեմի առաջնորդ Ս. Հովհան արք. Տերտրյանը եւ Կորնի գործերի խորհրդի նախագահ Լազար Մուշեղյանը:

ՄԱՍԼԱ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՄ

ԱՄԵՆԱԿԱՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՐԻԿՈՍՈՒՆ ԸՆՈՐՀՎԵՑ ՎԱՆԱԶՈՐԻ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԱՆՎԱՆ ԿՐԹՀԱՍՏԱՆԻՐԻ ՍԵԴԱԼԸ

Ապրիլի 26-ի երեկոյան Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Նորին Սրբություն Ամենայն Հայոց Գարեգին Ա կաթողիկոսին հանձնվեց Կանադայի Վազգեն Առաջինի անվան կրթահամալիրի «Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջին» մեդալը:

Վեհափառ Հայրապետին՝ որպէս կրթօջախի պատվո իրաւաւոր, կրթահամալիրի առաջին այս մեդալը շնորհվեց դպրոցի կայացման եւ կրտսեր դպրոցի մասնաճեղքի շինարարության ֆինանսավորման գործում Նորին Սրբության բարեսիրությանը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ունեցած ներդրման համար:

ՄԱՍԼԱ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՄ

ՀԱՄԱՐԱՐՁՄԱՆ ՏՈՆԸ ՊԵՐԳԱՐԱՅ ԹԵՄՈՒՄ

Հինգշաբթի օրը՝ մայիսի 13-ին, ինչպէս Հայ Առաքելական բողոքեկեղեցիների, Կանադայի Սուրբ Աստվածածին եկեղեցու գաղտնիքը եւ ինչեցին գվարքի ու ակտոր-ժալուր՝ ի յուր ամենքի հայտարարելով ամբ Տեր Հիսուս Բրիտանիայի Համբարձման տոնին ու կատարվելիք տոնախմբությանը: Սիրով լի հոգիներով ու երջանկությամբ փայլող աշքերով գալիս էին ու գալիս՝ սպասելով ինչ-որ բանի...

Բնութիւնը եւ իր գույնգույն, բազմերանգ ու անուշախոտ ծաղկներով «իչէ էր» սարերից, եկել ու մի չքնաղ Ծաղկածներ եր դարձել, որ շրջում էր բաղադրով մեկ՝ հաղորդելով այդ բարի լուրն ու իր հիասթափ փնջերից ծաղկներ գվիրելով մարդկային: Իսկ վաճառորդները էլ չէին զարմանում, այլ սպասումով նա-

յում էին ծաղկեպսակներով զարդարված հարսիկներին, որ իրենց եւ ծաղկեպսակներ բաժին հանեն: Սպասում էին, որ ծաղկեպսակներով զարդարված իրենք եւ թափորի հետ շարունակեն երբեք դեպի եկեղեցի ու մասնակցել այն գեղեցիկ եւ ուրախ ժողովուրդական տոնախմբությանը, որ ճրանց համար պատրաստել էին Տիկնանց միությունն ու Բարոզական կենտրոնը: Իսկ Ս. Վահան բախանա Ազարյանի օրհնանքի եւ օրվա խորհուրդը մեկնաբանող խոսքից հետո հավատավոր ժողովուրդը մասնակից դարձավ արդեն ավանդական դարձած հյուրասիրությանը, որ մատուցեցին Բարոզական լսարանի եւ Տիկնանց միության անդամները:

Հնչում էր դիդ-գուռնայի բարձր ու զվի ծայրը, պարում եւ ուրախանում էին մանուկներն ու մեծերը՝ իրենց շուրջը համայնաբերով անցնող-դարձողներին...

ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻ

ՀԱՄԱՐԱՐՁՄԱՆ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒՄ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ՎԵՐԱՀԱՍՏԱՍՄԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒՄ

Հինգշաբթի՝ մայիսի 13-ին, Հիսուս Բրիտանիայի համբարձման տոնին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Սբ. Պատարագ՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու՝ Երուսաղեմի եւ Թուրքիոյ միկրապետական արքունիքի գահակալներ Ս. Թորգոմ արք. Մանուկյանի եւ Ս. Մեսրոպ արք. Մուրաֆյանի մասնակցությամբ: Օրվա պատարագին էր Ս. Գրիգորի արք. Բունիարյանը:

Բրիտանիայի համբարձման տոնը Հայ Առաքելական Եկեղեցուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռ Սբ. Էջմիածին Մայր Աթոռ Սբ. Էջմիածին փոխարքունիքի հիշատակի օրն է՝ նաեւ: 484 թ. ի վեր Հայաստանի տարբեր

բնակավայրերում հանգրվան գտած Հայրապետական Աթոռը, Վարդաշապատի ազգային ժողովի որոշմամբ, 1441 թվականին՝ երկար դեգերումներից հետո, վերահաստատվեց լուսավորչահաստատ Սբ. Էջմիածնում:

Ի հիշատակություն պատմական այդ օրվա՝ Մայր տանարում հընթացս սրբազան արարողության, գույգ պատրիարքների նախագահությամբ, Իջման Ս. Մեղանի առջեւ տրվեց գոհաբանական մարքանք:

Ավելի քան կես հազարամյակի այս իրողությունը Գրիգորիս սրբազանը նկատեց իբրեւ Հայոց Եկեղեցու ողջախոսության, կամքի եւ գործունե արտահայտու-

թյուն: Եւ որպէսզի հաստատ մնա գահը, եւ Մայր Աթոռը շարունակի իր եկեղեցական գործունեությունը, սրբազան հայրն ու բոլոր ներկաներն աղոթք հղեցին առ Աստված՝ Ամենայն Հայոց Գարեգին Ա կաթողիկոսի առողջության համար:

Մեկնելով Համբարձման տոնի խորհուրդը՝ սրբազան հայրը մշեց, որ Համբարձման տոնը, հոգեւոր տոն լինելուց զատ, նաեւ ազգային-ժողովրդական տոն է, եւ հորդորեց ներկա հավատացյալներին վերականգնել ու վերագտնել ժողովրդական տոնի գեղեցիկ ավանդույթները:

ՄԱՍԼԱ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՄ

ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՈՒՄ ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶՈՒՄ

Վայոց ձորի մարզի Թառաքունքի Ս. Հովհաննէս եկեղեցին կառուցվել է 1896 թ.՝ գյուղացիների հանգանակությամբ: Զուրաբանյան որ պարտավոր է եղել աշխատանքից հետո մեկ քար բերել: Երկու տարվա նախապատրաստական աշխատանքից հետո կառուցվել է եռանակ բազիլիկ եկեղեցին: Այն գործել է մինչև 1937 թ., որից հետո արժանացել է այն նույն բախտին, ինչպիսին վիճակվել է Հայաստանի շատ եկեղեցիների՝ դարձել է պահեստ: 70-ական թվականներին գյուղի տարեցները դիմում են գրել Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ Վազգեն Ա Վեհափառ Հայրապետին, միջնորդելու վերաբարելու եկեղեցին: Պատասխանը դրական է եղել, բայց այդ աշխատանքները կատարող չի եղել: Եկեղեցին մնացել է որպէս օժանդակ կառույց եւ աստիճանաբար բայրալվել:

1998 թվականին Ռուսաստանի Դաշնությունում ապրող թառաքունքցի Հուսիկ Մարկոսյանի բարեսիրությամբ եկեղեցուն սկսվեցին վերանորոգման աշխատանքներ ծավալվել: Աշխատանքները լայն բախտ ստացան: Եկեղեցին բերսից, բերսից ամրացվեց, նրա շուրջը հավաքված հողի շերտը հեռացվեց, բարեկարգվեց շրջապատը: Ներսում կառուցվեց տուրք սեղան, իսկ եկեղեցու վրա դրվեց նոր խաչ:

Ապրիլի վերջին օրը մարդաշատ եւ Թառաքունքը՝ Նորավանքի օծման արարողությունից հետո սա երկրորդ մասնաշաղկապ միջոցառումն էր Վայոց ձորում: Այս օրը տեղի էին ունենալու Ս. Հովհաննէս եկեղեցու օծումը եւ գյուղի հիմնադրման 170-ամյակին նվիրված տոնակատարությունները: Առավոտյան մատուցվեց Ս. Պատարագ (պատարագիչ՝ Ս. Նարեկ Բախանա

Ամիրյան): Ապա տեղի ունեցավ մատարի օրհնություն: Ողջունի խոսքով ելույթ ունեցավ Կանադայի հայոց թեմի առաջնորդ Ս. Հովհանն արք. Տերտրյանը: Հաջորդեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի հղած ողջունի խոսքը: Խոսք ասացին նաեւ Սյունյաց թեմի առաջնորդ Ս. Արքաիմ եպս. Մկրտչյանը, Վայոց ձորի մարզպետ Պ. Մանուկյանը, Թառաքունքի գյուղապետ Վ. Մարկոսյանը: Ծառ հուլիք էր բարեբարի ելույթը:

Սրբազան հայրերին շրջապատել էին նաեւ գյուղի կիրակնօրյա հոգեւոր դպրոցի սաները, որոնց տրեղեցի խաչերն ու պատվիրան հավատարմի մնալու Հայ Եկեղեցուն: Պատրաստվել էր ներկաներին մատուցվեց նաեւ գեղարվեստական հարուստ հայտագիր՝ ինքնագործ խմբերի եւ այլ ելույթներով:

Բորիս ԲՈՂԱՐՅԱՆ

ՃԵՄԱՐԱՆՈՒՄ ՆՇՎԵՑ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՒԱԿԻ 75-ԱՄՅԱԿԸ

Մայիսի 4-ին Գեորգյան հոգեւոր ճեմարանում Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի դիվանապետ Ս. Ներսես արք. Պողոսյանի բարձր նախագահությամբ մշվեց հայ տաղանդաշատ բանաստեղծ Պարույր Մեակի 75-ամյա հոբելյանը:

Ճեմարանի դասախոս Սուրեն Դանիելյանի բացման խոսքից հետո ավելի քան մեկ ժամ դաժիժում ինչում էր սեակյան պոեզիան: Ճեմարանի 4-րդ լսարանի սաների երեկայացրած գրական-գեղարվեստական հայտագիրն ընդգրկում էր Մեակի կոմիտասական դրամաները, հայրենասիրական ու սիրային բանաստեղծությունները:

Հանդիսության ավարտին օրհնության խոսք ասաց Ս. Ներսես արք. Պողոսյանը:

Տերկունքի ավարտվեց ճեմարանի բազմիցս իր օժանդակությունը ցուցաբերած «Կայծակյան» հիմնադրամի մրցանակների հանձնմամբ: Մրցանակներ տրվեցին 1997-1998 թթ. ուս. տարվա ընթացքում լավագույն մանակավ 10 ուսանողի, եւ երկու մրցանակ՝ լավագույն տեղեւծագործական շարադրության համար:

ՄԱՍԼԱ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՄ

ՈՒՐՈՒԳՎԱՅՈՒՄ ԼՈՒՅՍ ԵՒ ՏԵՍԵԼ «ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՍԵԼ ՈՒՂԵՑՈՅՑ» ԳԻՐՔԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՍԸ ՊԱՏԱՐԱԳԸ ԸՆԴԱՅՆՎԵՐ ԵՒ ԻՍՊԱՐԵՐԵՆ

Ուրուգվայում Մարի Քեչիչյան-Տիկնիկյանի աշխատասիրությամբ լույս է տեսել «Կրօնական եւ տեղեւ ուղեցոյց» հատորային:

Անգլերեն, իսպաներեն եւ հայերեն լեզուներով գրված այս գիրքը կրօնական համապարփակ տեղեկություններ է հաղորդում ընթերցողին: Երեք բաժնից բաղկացած գիրքը ամփոփ կերպով վերկայացնում է աշխարհում գոյություն ունեցող կրօնական տարբեր դրսեւորումներն ու ուղղությունները, հավատալիքներն ու կրօնական հասկացությունները, կրօնների վերաբերյալ ժամանակագրական տարբեր դեմքեր եւ դեպքեր, եկեղեցիների ու դրանց հետ կապված այլ տեղեկություններ:

Այս ամենի կողքին առանձին մաս է կազմում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Սբ. Պատարագին նվիրված գլուխը: Հայոց Եկեղեցու սրբազանային արարողությունը ներկայացված է նաեւ անգլերեն եւ իսպաներեն թարգմանություններով, ինչպէս երեւինակն է գրքի առաջաբանում գրում, «որպէսզի ընթերցողները տեսնեն ու հասկանան ինչպիսի բանաստեղծական ոգի

եւ խորունկ հավատք կայարիական այս Սբ. Խորհուրդը:

Գիրքը 65 գլխից կազմված ընդարձակ բառարանի մի մասն է միայն, որ առանձին հատորով լույս է տեսել Ուրուգվայի թեմի առաջնորդ գերշ. Ս. Հակոբ եպս. Գլմեյանի թելադրանքով եւ գործուն մասնակցությամբ: Հեղինակն իր երախտագիտությունն է հայտնաւում սրբազան հորը, որն իր օգտակար խորհուրդներով մեծ ներդրում է ունեցել գրքի պատրաստման գործում:

Գրքում գետնված է նաեւ թեմի առաջնորդի գնահատանքի գիրք օրիորդ Մարի Քեչիչյանին ուղեցույց-բառարանի պատրաստման եւ իրատարակման օգտաշատ գործի համար:

Հեղինակն իր աշխատությունը նվիրել է Արեւմտյան Հայաստանից Ուրուգվայ գաղթած ծնողների, ինչպէս նաեւ 1915-1922 թթ. թուրքերի կատարած հայոց մեծ եղեռնից օրրացած մանուկների եւ երիտասարդների հիշատակին:

Գիրքը լույս է տեսել ամերիկահայ Մարգար Գալֆայանի մեկնաստությամբ:

Հեղինակ ՄԿՐՏՅԱՆ

Յովնան արք. ՏԵՐՏԵՐԵԱՆ
30 ապրիլ 1999 թ.
Սուրբ Էջմիածին

ՇԱՐՈՒՆԿԵԼՈՎ ՄՐՅԻԼԴԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՔՈԼԵԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԱԴՐ

ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑ Տ. ԲԱԳՐԱՍ ԱՐԵՂԱ ՂԱՍՏԱՅԱՆԻ ՀԵՏ

Շուրջ 11 ամիս է, ինչ Մայր Աթոռի միաբան Տ. Բագրաս արքեպիսկոպոսի անունով Սեբեդիայում Մրֆիլդի աստվածաբանական քոլեջում և Լիզի համալսարանում: Մարտի 29-ին հայր սուրբը միազավ Նորին Սուրբ Օծորյուն Տ. Տ. Գարեգին Ա կարողությունից հալածաբանությունից պարզապես հեռացվելու և Լիզի համալսարանում իր քանակական քոլեջում ծառայելու:

Հայր սուրբ, արդեն բավականին ժամանակ է, ինչ ուսանողները հաստատվել գտնվում են Ամերիկայում, պատմել այդ ուսանողների կյանքը օջախների մասին, որտեղ այժմ ուսանում են և հիմնականում ի՞նչ առարկաների մեջ են մասնագիտանում:

Երկու ամիս լեզվի ինտենսիվ դասընթացների հետևից Բիստոնի «Փրինցիպ» քոլեջում, որից հետո՝ սեպտեմբերի ամսին, տեղափոխվեցին Ամերիկայի հյուսիս Մրֆիլդի աստվածաբանական քոլեջ և Լիզի համալսարան, որպեսզի այնտեղ շարունակեն ինչ հետագա ուսումը:

Անեմ, որ Մրֆիլդի աստվածաբանական քոլեջի առաջին հայ ուսանողը, որքան տեղյակ են, եղել է Տ. Տ. Տիրան արքեպիսկոպոսը, որն ուսանել է 1929 թ.: Հետագայում այս շարքը շարունակել են մեր մեծ հոգևորականները՝ Երուսաղեմի երախտարժան Տ. Նորայր արք., Պողոսյանը, ԱՄՆ-ի Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արք., Հովսեփյանը, Մայր Աթոռի ղեկավար պետ Տ. Ներսես արք., Պողոսյանը և շատ ու շատ ուրիշ հոգևորականներ:

Համալսարանից երկրորդ պատերազմից հետո բավականին մեծ թվով հայեր, մասնավորապես երիտասարդներն ապաստան են գտել Մրֆիլդում:

Ինչպես ասացի, դասընթացն սկսել են սեպտեմբերի ամսին: Սկզբնական շրջանում, ամենե՛տ ասած, դժվարանում էի, որովհետև լեզուն չէի յուրացրել ամբողջությամբ: Անշուշտ, առարկաներն այնքան էլ դժվար չեն, որովհետև ճանաչողական տարրերից գրեթե այդ ամենն անցել են, պարզապես նոր գաղափարներ, նոր հորիզոններ, նոր տեսակետներ... Ես ուսանում եմ Ս. Պատարագի մեկնությունը, Աստվածաշունչը ժամանակակից մշակույթում, հովվական աստվածաբանությունում, արդեն ճանաչարհները, հունարեն պատմությունում ու ուսուցումը՝ Հիսուսի մասին, քրիստոնեության բարեխաղությունը:

Հայր սուրբ, ի՞նչ ընդօրինակելի կողմեր ունեն Մրֆիլդի աստվածաբանական քոլեջն ու Լիզի համալսարանը:

Մեկնաբան ընդօրինակելի է քոլեջի համայնական կյանքը: Ցավում եմ, որ մեր ճեմարանում չկա, բայց հուսով եմ, որ նոր կառուցվող շենքում անպայման պիտի տեղավորվի «համայնական սենյակ» կոչվածը, որտեղ դասերից հետո՝ երեխայն ժամերին, ուսանողները հավաքվում են, խոսում են միմյանց հետ, քերթեր են կարդում և նույնիսկ միասին սուրճ են խմում: Հիմա չգիտեմ՝ այսօրվա պայմաններում ո՞ր, մեր ուսանողների՝ տարիքով պայմանավորված մտածելակերպի առումով, ընդունելի՞ է, քե՛ն չ, այնտեղ ուսանողներն ավելի մեծ են, բայց այնուամենայնիվ այս «համայնական սենյակ» կոչվածը շատ կարևոր, հետաքրքիր ու անհրաժեշտ գաղափար է:

Ընդօրինակելի կողմերից գանձվում են մեծ այն, որ քոլեջում որևէ հանգիստություն կազմակերպելիս մեծ է ուսանողների մասնաձեռնությունը: Նույնիսկ կա՝ «ավագ ուսանող» կոչված մեկը, որը տեսչական կազմի մեջ ընդգրկված ամեն ինչ ուսանողության ձայնը հասցնում է տեսչությանը:

Ուսանողներն ունեն տարեկան ժողովներ, հավաքվում են, իրենց բոլոր հարցերը բոլոր են համեմատել և ներկայացնում տեսչությանը:

Վաչախ, ունի հստակ հիմնադրամ տեսիլական միջոցներով ստեղծած: Բոլորի համաձայնությամբ հաստատվում է մի գումարաչափ, եւ ամենքն էլ վճարում են տարվա ընթացքում, ստեղծվում է հաստատություն հիմնադրամը:

Բայց ես գագի մի բան, չգիտեմ ինչպես կոմունիկ: Մեր ճեմարանն ամբողջովին քննադատության տակ ենք առնում, բայց հիմա՝ արտասահմանում սովորելուց հետո, քերես, խոստովանում եմ, որ մեր ճեմարանում ստացված ուսումը զուցե շատ դեպքերում մակերեսային է, բայց այնուհանդերձ՝ քերականության չէ, եւ ճեմարանից դուրս եկած ուսանողը կարող է հաջողությամբ տվորել աշխարհի բարձրագույն համալսարաններում, տվյալ պարագայում՝ Մրֆիլդի «Ս. Հարություն» քոլեջում և Լիզի համալսարանում: Մա իմ կարծիքն է:

Այս փորձառության մեջ ես այն մտածումներով եմ մեկ անգամ ես իմ պարզ, որդիական երախտիքն եմ ուզում հայտնել Հոգևոր ճեմարանին, որ ես, ինչպես նաեւ իմ եղբայրները մյուս երկրներում, ճեմարանի տվածի շնորհիվ փորձում ենք ներկայացնել Հայ Առաքելական Եկեղեցին ընդհանրապես, ապագայում էլ պիտի փորձենք այդ համաքրիստոնեական մեծ ընտանիքը ներկայացնել Հայ Եկեղեցուն:

Լիզիում ճախիկն ճեմարանական, դասախոս ի՞նչ կատարանք այսօրվա ճեմարանցուն:

Դիմում եմ ճեմարանի ուսանողներին, ճեմարանից բաղել ինչ որ կարող եք, տվորել սովորելուն: Գիտեմ, որ բոլորս էլ երիտասարդ ենք, ունենք բազում խնդիրներ, ուզում ենք պարզ կյանքով ապրել, երբեմն առանձնաճանաչ, երբեմն դուրս գալ ճեմարանական շրջանակներից: Համզգույն ժամը թող մնա հանգստի ժամ, բայց ժամանակի մեծ մասը տրամադրեք ուսանելուն, ամբարներին, որպեսզի ապագայում, երբ դուրս գալիս լայն բացվեք, եւ ճեմարանի սանդիկն ավելի լայն հնարավորություններ տրվեն այս հաստատություններում ուսանելուն, մեզից կրկնակի ավելի կարողանաք ներկայացնել Հայաստանյայց Եկեղեցուն և օգտակարությամբ նուրբ Մայր Աթոռ:

Օգտվելով այս առիթից՝ ուզում եմ իմ խոր, որդիական շնորհակալությունը հայտնել Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Առաքելին, որ իմ այս առիթն ընձեռեց:

Հայր սուրբ, տեղեկացանք, որ բացի ուսանողից, գրադրող եք նաեւ հովվական գործունեությամբ: Ինչպե՞ս եք համատեղում ուսումն ու աշխատանքը:

Այո, հովվական պարտականություն, որը մասնակի է, բայց որ ամեն ամսվա միայն առաջին կիրակին եմ մեկնում Մանչեստր հայկական եկեղեցում պատարագ մատուցելու, հայ համայնքի հետ շփվելու: Անեմ, որ Մանչեստրի հայ եկեղեցին հիմնադրվել է 1870 թ. և Եվրոպայի ամենահին հայկական եկեղեցիներից է: Մանչեստրի հայոց գաղութը շատ մեծ չէ՝ շուրջ 300 հոգի, սակայն Մանչեստրի շրջակա քաղաքների հայերը նույնպես պատարագի հավաքվում են եկեղեցում, եւ ամեն պատարագի, առանց չափազանցության, 150-200 հոգի ներկա է լինում:

Ի՞նչ շատ ցնրմ ընդունեցին, եւ գրեթե ոչ մի դժվարություն չառաջացավ: Մանչեստրի հայ համայնքը երբ գեղեցիկ ավանդություն ունի, եկեղեցում ներքնահարկում մեծ քանակ, եւ ամեն պատարագից հետո բոլոր հավաքվում են այնտեղ՝ «փրճառ»:

Ցանկանում եմ հատուկ նշել, որ ամեն ամսվա առաջին կիրակի օրը Մանչեստրում իմ համար մի փոքրիկ Հայաստան, մի փոքրիկ Մ. Էջմիածին է ծնվում...

Մարտի 29-ին ճեմարանում տեղի ունեցավ ժողով, որին մասնակցեցին տեսչության անդամները՝ գլխավորությամբ Տ. Հայկազունի և վրդ. Նաջարյանի, եւ դասախոսական կազմը:

Ժողովում հիմնականում քննարկվեցին Ս. Բ և Գ լսարանների կարգապահությամբ եւ առաջադիմությամբ բարձրացմանը նպաստող հարցեր: Երկուսից մեկը մասնավորապես Տ. Հայկազունի և վրդ. Նաջարյանի, դասախոսական աշխատանքի համագործակցության մասին:

ՃԵՄԱՐԱՆԱԿԱՆ ԿՅՈՒՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԴԱՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Մարտի 11-ին՝ ժամը 18-ին, ճեմարանի տեսչությանում տեղի ունեցավ ժողով, որին մասնակցեցին տեսչության անդամները՝ գլխավորությամբ Տ. Հայկազունի և վրդ. Նաջարյանի, եւ դասախոսական կազմը:

Ժողովում հիմնականում քննարկվեցին Ս. Բ և Գ լսարանների կարգապահությամբ եւ առաջադիմությամբ բարձրացմանը նպաստող հարցեր: Երկուսից մեկը մասնավորապես Տ. Հայկազունի և վրդ. Նաջարյանի, դասախոսական աշխատանքի համագործակցության մասին:

ՈՒՍՏԱՅԱՆՈՒՅՑՈՒՆ
ԽՈՐ ՎԵՐԱՊ

Մարտի 20-ին «Մուսնի Վերապ» տոնի կապակցությամբ ճեմարանի Ս. Բ և Գ լսարանի սանդիկն ու խորհուրդը մեկնեցին Խոր Վերապ: Ծանալարիկն նրանց միացավ ուխտավորների մի մեծ բազմությունը Արմավիր քաղաքից:

Ուխտավորների համար խոսեցին Գ լսարանի սանդիկ Գուրգյան Գրիգորյան ու Սանասար Ղալիբյանը:

Ճեմարանականները պատարագի մասնակցեցուց հետո բարձր ու հոգեմորթ տրամադրությամբ վերադարձան Մայր Աթոռ:

ՄԱՅՆԱԿԱՆ ՄԱՅՆԱԿԱՆ
ՎԵՐԱՊԱՆՈՒՅՑՈՒՆ

Արդեն ավանդույթ է Մեծի պահոց շրջանում ուրբաթ օրերին, ճեմարանականների՝ Մայր Աթոռի շրջակա եկեղեցիներ գնալ ու Հանգույնի ժամերգություններ կատարել:

Մարտի 12-ին ճեմարանականները տեսչության անդամների հետ՝ գլխավորությամբ Տ. Հայկազունի և վրդ. Նաջարյանի, ժամերգության մասնակցեցին համար այցելեցին Ս. Աստվածածին եկեղեցին, մարտի 19-ին՝ Ս. Գայանեի, իսկ մարտի 26-ին՝ Ս. Հռիփսիմի վանքը:

Ի տարբերություն անցած տարիների՝ այս տարի ժամերգություններին մասնակցում էին բազմաթիվ հավատացյալներ, եւ ճեմարանականները նրանց հնարավոր չափ մասնակցի դարձրին արարողություններին:

«ՅԵՐԱՍԱՆԻ ԱՐԿԱՆՑ
ՕՐՀՈՒՄԵՆՍԵՐ ԵՂԵՅԻ»

Մարտի 29-ին ճեմարանի լսարանի սանդիկ, առաջնորդությամբ եկեղեցական երաժշտության դասախոս Նորեն Պալանյանի, շարժվեցին դեպի Ս. Գայանեի վանք՝ կրկին անգամ խմբակները Լուսինե Զարարյանի շրջից առնելու: Խորհրդի ղեկավարը՝ ամենայն հայաց տեսակով՝ կյանքն ու ավանդը, այն խոյնդություններ, որոնց հանդիպում էր մեծ ճակատագրի:

Խորհրդի ղեկավար և Լուսինե Զարարյան գույգի մասին շատ է խոսվել, անգամ հաստատվել է նրանց ավանդը հայ հոգևոր երգի ճորտյա պատմության մեջ, եւ այս անգամ էլ սիրելի դասախոսը ներկայացրեց իրենց անձնական և անձնակազմի երջանիկ պահերը:

ՄԱՐՏԻ 29-ԻՆ, ԶԱՅԱԿԱՆ
ԱՐԿԱՆՑՈՒՅՑՈՒՆ

Սուրբ Ձատիկի տոնի կապակցությամբ ճեմարանականներն իրենց անձնական մասնակցությունը բերեցին գաղական արարողություններին թե՛ Մայր Աթոռում եւ

թե՛ Ս. Շողակաթի, Ս. Գայանեի, Ս. Հռիփսիմի, Ս. Աստվածածին, Ս. Գեղարդ եկեղեցիներում: Մեծերգի պատարագից հետո՝ ապրիլի 5-ին, ճեմարանականները մեկնեցին գաղական մեկնաբանարար արժանիքներ:

Ինչպես Ավետարանն է ասում, «Մալան արժանի է իր վարձքին»:

ՄԱՅՆԱԿԱՆ
ՎԵՐԱՊԱՆՈՒՅՑՈՒՆ

Ապրիլի 11-ին ճեմարանի տեսչության անդամները, գլխավորությամբ Տ. Հայկազունի և վրդ. Նաջարյանի, դասախոսական աշխատանքի համագործակցության մասին:



Պետրոս Դավիթ Հակոբյանի եւ իր փոքրիկ սաների կողմից պատրաստած «Լույս տվեք մեզ» ներկայացումը:

Ներկայացման ընթացքում սիրելի երեխային կյանքն էր՝ սկսած Ս. Մանգից մինչև Ս. Համբարձում: Հավաքած ներկայացման ճեմարանի տեսչի հայր Հայկազունը բարձր գնահատեց նախ՝ մտախոյզունը, ապա՝ աշխատանքը, որ կատարվել էր փոքրիկ դերասանների հետ:

ԳՆԱԿԱՆ
ԴԱՄԱՆԱԿԱՆՈՒՅՑՈՒՆՆԵՐԻ
ՀԱՐԳԸ

Ապրիլի 12-15-ը Դանիակյան եկեղեցում համարակալան Յորգեն Յորգենները հանդես եկավ դասախոսությունների շարքով: Առաջին դասախոսության նյութը բարդոր խոսքերով էր նվիրված: Հիմնականում խոսվեց բարդի նպատակի եւ թեման ընտրելու կարևորությունը մասին: Դասախոսողը մասնավորապես նշեց, «Այն բարդից, որ ցանկանում է ասել ամեն ինչ, ոչինչ չի ասում»:

Երկրորդ դասախոսությունը նվիրված էր հովվական խմբակին: Յորգեն Յորգենների վերջին դասախոսությունը նվիրված էր հոգեւոր շնորհների:

Ապրիլի 12-15-ը ճեմարանում դասախոսեց Դանիակյան եկեղեցու երեք արժանապատիվ Հոգեւոր Հայրապետ: Առաջին դասախոսությունը վերառված էր «Մանկավարժ իբրեւ աստվածաբանության ծառա»:

Երկրորդ դասախոսության նյութը՝ «Հիսուս երեք տներում» էր: Խոսվեց Նոր Կտակաբանության մասին: Դասախոսողը մասնավորապես նշեց, «Այն բարդից, որ ցանկանում է ասել ամեն ինչ, ոչինչ չի ասում»:

Վերջին դասախոսությունը նվիրված էր «Երեխաների եւ եկեղեցու» հարաբերություններին: Առաջնորդը հարցն էր, «Ինչպե՞ս երեխային քրիստոնյա դարձնել»:

ՄԵՐԻ ՏՆՆԻ ԿԵԼԻԿՈՒ
ԿՆՈՒՄԵՆՍԵՐ ԵՂԵՅԻ
ՄԱՐՏԻ 29-ԻՆ, ԶԱՅԱԿԱՆ
ԱՐԿԱՆՑՈՒՅՑՈՒՆ

Ապրիլի 15-ին Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս Ս. Օ. Ս. Ս. Արամ Ա կաթողիկոսն այցելեց ճեմարան: Ճեմարանի սանդիկ Նորին Սրբությանը ներկայացրեցին իրենց պատրաստած ծրագիրը, երգեցին «Ճեմարանի քայլերգը»,

այսպէս «Չեյրունցիներ» եւ «Ազնիվ ընկեր» երգեր: Այնուհետեւ, տեսուչ հայր սուրբի հրահանգով, ճեմարանի քաղաքապետ Անդրանիկ Հակոբյանը ներկայացրեց դասախոսական կազմը: Այսպէս ճեմարանի երգչախումբը կատարեցին բարձր մակարդակով հնչեցրեց «Կիլիկիա» երգը: Եղան նաեւ գործիքային կատարումներ (չուրակ, դաշնամուր):

Գեղարվեստական մասի ավարտից հետո Նորին Սրբությունն օրհնարանով խոսք հղեց ճեմարանականներին:

ՄԱՐՏԻ 29-ԻՆ, ԶԱՅԱԿԱՆ
ԱՐԿԱՆՑՈՒՅՑՈՒՆ

Նորակազմի բացման նախօրեին՝ ապրիլի 17-ին, ճեմարանի Ե լսարանի սանդիկ, գլխավորությամբ փոխտեսուչ Տ. Բարսեղյան արքեպիսկոպոսի, մեկնեցին Նորավանք: Այդ անդրոջ օրը Սյունիքի թեմի առաջնորդ Տ. Արքատիկ եպիսկոպոսը, Սարգիսյանի եւ թեմի բաժանաբան հայրերի հետ մշակեցին ծրագիրը: Յուրաքանչյուրը տեղեկացվեց իր պարտականությունների վերաբերյալ: Կազմվեցին խմբեր՝ մասնակցելու համար պատարագին, դիմավորելու համար հյուրերին եւ այլն:

ՄԱՅՆԱԿԱՆ
ՎԵՐԱՊԱՆՈՒՅՑՈՒՆ

Ապրիլի 24-ին՝ Մեծ եղեռնի մահապատերազմի հիշատակի օրը, մատուցված Ս. Պատարագից հետո ճեմարանի Գ, Ե, Զ լսարանի սանդիկ, գլխավորությամբ ճեմարանի վերակազմը՝ Կազմեցին սրկ. Զեարյանի, մեկնեցին Միջնադարեղի իրենց հարցաքննի տուրք մատուցելու Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին:

Ճեմարանականները ծաղիկներ դրեցին Միջնադարեղի հուշահամալիրում շջնալով, «Յիշատակն արդարոց օրհնութեան եղիցի»:

ՄԱՅՆԱԿԱՆ
ՎԵՐԱՊԱՆՈՒՅՑՈՒՆ

Ապրիլի 28-ին ճեմարանի լսարանի սանդիկ, նախաձեռնությամբ ճեմարանի իմաստասիրության պատմության դասախոս պրոֆեսոր Հ. Սիրոյանյանի եւ գլխավորությամբ ճեմարանի վերակազմը՝ Կազմեցին սրկ. Զեարյանի, ուղեւորվեցին Փարաջանովի բանգարան: Ճեմարանականները մեծ հետաքրքրություն ուսումնասիրեցին մեծ արվեստագետի թողած վատաւը:

Փարաջանովի բանգարանից ճեմարանականները ուղեւորվեցին Հայաստանի արդի արվեստի բանգարան, որտեղ ծանոթացան 20-րդ դարի ակադեմիկոս կերպիչների, քանդակագործների աշխատանքներին:

ԴՈՎԱՏՈՐ ՄԵՐՎԱՆՏԻ
ԴԱՄԱՆԱԿԱՆՈՒՅՑՈՒՆ

Ապրիլի 29-ին եւ 30-ին ճեմարանում դասախոսեց (Ֆրանսերեն) դոկտոր Ժերար Սիգալտը: Դասախոսությունը բարձրանեց համալսարանի ֆրանսերենի դասախոս Սուսան Մեշալարյանի: Դասախոսության նյութը երկրորդ անգամ՝ Պրոֆ. կատարած փրկագործության նշանակությունը եւ մարդկային կյանքում: Շոշափեց նաեւ պեմեմադրողի (հոգեբանություն) խնդիրները, վախճանաբանությունը որպես գիտություն, Ս. Երրորդության անձերի ներքին փոխաբերություններ: Վերջում դասախոսողը փորձ պատասխանեց լսարանի հարցերին:

ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑՈՒՆ

«ՏԷՐ ԿԵՅՈՒ ԴՈՒ ԶՀԱՅՍ»

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետն իր բարոգներին մեկուն էմուլ է, քե Հայաստան աշխարհում յուրաքանչյուր բարի տակ Ավետարան կա, յուրաքանչյուր ժայռի տակ՝ եկեղեցի ու մատուռ։ Իրոք, շինարար հայ մարդն աշխարհում առաջինն ընդունեց խաչային՝ Նրա հարության հետ հարություն առնելու հավատքով ու հույսով։ Լուսավորչի տեսիլքի համոզմունքով հերանոսական կառույցների տեղում խաչի նշան դրեց, վեր խոյացրեց քրիստոնեական հոյակերտ եկեղեցիներ։ Ստեղծագործ հայրը դեռևս առաքելական դարերում մարտիրոսների գերեզմանների վրա կամ նրանց մատուռ-հիշատակների ամփոփման տեղում մատուռ-վկայարաններ կառուցեց։ Սրբացած անձանց հիշատակին շինված վկայարանների շուրջ կատարվում էին յուրաքանչյուր տեղի, բնակավայրի, տվորություն հետ կապված որոշակի տոներ, ծեսեր։ Աղոթքն առ Մատված մարդկանց սրտի ցանկությունն էր և ուխտը, որ կապվում էր այդ սրբատեղիի հետ ու դրա միջոցով բերում փափագների, սպասումների իրականացում, հույս ու հավատք, գորավոր հավատք...

Տարիներ առաջ էր, հայրն երկրորդ ժամանակ անկողնային հիվանդ էր։ Մայրս սրտի անհուն ցանկությամբ ել բեյադարանքով հետ կապված որոշակի տոներ, ծեսեր։ Աղոթքն առ Մատված մարդկանց սրտի ցանկությունն էր և ուխտը, որ կապվում էր այդ սրբատեղիի հետ ու դրա միջոցով բերում փափագների, սպասումների իրականացում, հույս ու հավատք, գորավոր հավատք...


Աղբյուրայ գյուղին մերձակա դաշտերի մեջ Հովհաննես Մկրտչի անունը կրող փոքրիկ եկեղեցի-մատուռ, որ 1966 թ. գյուղացիների կողմից վերանորոգվել է, դարձել է մի կապված սրբատեղի-ուխտավայր է, որ ուխտի հատուկ օրն ունի։ Ասում են, որ Ս. Կարապետը եղբայրների է ամուլ կամ երեխայի սպասող կանգնել։

Արմավիր տանող մայրուղուց ձախ՝ մի փոքրիկ բարձունքի վրա, «Մոխրաբաթի» կոչվող աղբյուրների է, որի մոտ Հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից փակցված գրությունը վկայում է, որ այդ վայրը ը. Զ. 5-4-րդ հազարամյակի բնակատեղի է։ Սերունդների պատմության ո՞ր դարից մնացած հիշատակություն։ Ծրջակա բնակչության մեջ հավատալիք կա, որ երե կապույտ հագ հիվանդություն ունեցող երեխային տանեն «Մոխրաբաթի» կոչվող աղբյուրներից և այդտեղի մոխրաբաթն հողից ցնեն նրա շապկից ներս, կրուժիկի խոտով։

Այսօր ամենքս, եկեղեցի մտնող յուրաքանչյուր հավատացյալ, քե մատուռ ու սրբավայր գնացող ուխտավոր, մեր ծայրը, ցանկություններն ու աղոթքները հեծն առ Մատված ել վեր պարզված ձեռքերով ու խոնարհ սրտով աղաչելու մեր Տիրոջը, Տիրամորը յույս սրբերին ու երանիկ մարտիրոս-մահատակների բարեխոս ու միջնորդ ունենալով, որ աշխարհին խաղաղություն լինի, աղոթենք մեր ազգի հոգևորական ել երկրի բարգավաճման առաքելաշավիղ Հայ եկեղեցու պայծառացման, հայոց Հայրապետի առողջացման համար։

Լարդուհի ՄԻՐԶԱԽԱՆԻՆ
«Ս. Ներսիս Ընդհայր» կիրակնօրյա վարժարան

ԺԱՄԱՆՆՑ ԺԱՄԱՆՆՑ ԺԱՄԱՆՆՑ ԺԱՄԱՆՆՑ ԺԱՄԱՆՆՑ ԺԱՄԱՆՆՑ ԺԱՄԱՆՆՑ



ՈՒՂԱԿԱՆԱՅ. 1. Որսաշուկ։ 2. Հայ հերանոսական դիցաբանը գլխավորողը։ 4. Պետություն Աֆրիկայում։ 6. 1918-20 թթ. Հայաստանի Հանրապետության պետական գործիչ։ 7. Հայ միջնադարյան առակագիր վարդապետ։ 10. Պաշտամունքային կենտրոն Արշարունի գավառում։ 12. Վայր, ուր կրկնվեց արարների խոհերը։ 14. Հայ ֆիդայի։ 18. Ռուս մեծամեծ գրող։ 19. Գունավոր հեռուստատեսության գյուղարարը։ 20. Վայր, որտեղ խաչվեց Քրիստոսը։ 21. 9-11 դդ. արաբական շարժման կենտրոն։ 22. Պաշտարարական առավանջողիկ հունական դիցաբանություն։ 23. Գարնան ավետարեր ծաղիկ։ 27. Անտառային կենդանի։ 28. Զաղաղ Արևմտյան Հայաստանում։ 29. Տղամարդու երգեցիկ ձայն։ 30. Կղզի Վանում լծում։ 35. Լիճ Հայկական լեռնաշխարհում։ 36. Գերմանացի նշանավոր պետական գործիչ։ 37. Աստվածաշնչյան բազմաթիվ մարգարե։ 44. Զմեռային մարդուկ։ 45. Ֆրանսիացի նշանավոր գրող։ 47. Խոսքի մաս։ 48. Ս. Խորենացու «Աղայ պատմության» մաս կազմող հատված։ 51. Կղզի Միջերկրական ծովում։ 54. Մեծ Հայքի 9-րդ մահանգ։ 55. Կիպրոսի մայրաքաղաքը։ 57. ԱՄՆ-ի պրեզիդենտներից։ 58. Ամենացի ֆիդայի, բվանային միախնդրված ինքնապաշտպաններից։ 61. Ավ. Իսահակյանի պատմավարքներից։

ՀՈՐԻՋՈՒԿԱՆ. 2. Նշանավոր արեւելագետ, հայագետ։ 5. Հայոց մայրաքաղաք։ 8. Գերմանացի կոմպոզիտոր, դաշնակահար, դիրիժոր։ 9. Հնչյունաբանի որևէ աստիճան կես տոն իջեցնելու նուստգրական նշան։ 11. Սիլյուրոթայի երգիչ։ 15. Խաղողի վազ։ 16. Գերմանացի կոմպոզիտոր, երգեհոնահար։ 17. Հասցահատիկի դաշտ։ 24. Արեւմտյան Կասպիական պատմական անվանումը։ 25. Եկեղեցի Երևանում։ 26. Երևան... 31. Արարչի մյուս անվանումը։ 32. Ներմուծման և արտահանման մարտական արգելի։ 33. Գյուղ Մեանի շրջանում։ 34. Եկեղեցուն կից շինություն։ 38. Զաղաղ Կանադայում։ 39. Երկրորդական կրթական հաստատություն։ 40. Կիլիկիայի հայոց բազարի սպարապետ։ 41. Նշանավոր ավան Բարձր Հայքի Եկեղեցու գավառում։ 42. Ավստրալիական խոշոր բոլոր։ 43. Սրածայր գործիք։ 46. Երանական-դրամատիկական մերկայացման երկան սցենարի տերեր։ 49. «Աստվածային կասկածներություն» պոեմի հեղինակ։ 50. Հարվածային երանական գործիք։ 52. Հայ մեծամեծ երգիչներից։ 53. Լեռնաշխարհ Հայկական պար լեռնաշխարհում։ 56. Երկրամաս Միջերկրականի ափին։ 59. Իր երկրից երգերը կատարող ժողովրդական երգիչ։ 60. Ռուս գրող։ 62. Ուղղամյուն, անգլերեն, պոմագարդ տանար։ 63. Իտալիայի դրամական միավորը։

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՅՐԱՌՈՒ
ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Միաբնակություն։ 2. Նուր։ 3. Բաժանվել։ 4. Լեռ։ 5. Ռեքի։ 6. Խոլերա։ 7. Առաքի։ 8. Նալի։ 9. Ենթագիտակցություն։ 10. Նարդո։ 11. Սյան։ 12. Նարեկ։ 13. Գանո։ 14. Տեմետի։ 15. Ինստուտություն։ 16. Նա։ 17. Ռու։ 18. Սրախ։ 19. Փոքրիկ։ 20. Կենսաբան։ 21. Արի։ 22. Մատան։ 23. Անապա։ 24. Ներքին։ 25. Իգիլ։ 26. Անդր։ 27. Իգնատի։ 28. Սեր։ 29. Բաժնի։ 30. Իրիկ։ 31. Նա։ 32. Նար։ 33. Տառա։ 34. Բրիտան։ 35. Սի։ 36. Սի։ 37. Անո։ 38. Գալիկ։ 39. Գե։ 40. Տեմետի։ 41. Ռեքի։ 42. Անապա։ 43. Մեմետի։

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկաթաբաթեր
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Եջմիածին
Հիմնադրվել է՝ Ս. Եջմիածին Քրիստոնեական դաստիարակության ել Բարձրության կենտրոն
Գլխավոր խմբագիր՝ Կարեն Մաթևոսյան
Գրանցման վկայական՝ 624, **Հասցի՝** 69333
Խմբագրության հասցեն՝ Բ. Վարաճառաշ, Ս. Գայանի եկեղեցի, Քրիստոնեական դաստիարակության ել Բարձրության կենտրոն
Հեռախոս (8+259) 56780
Արձագրության կատարելիս հղումը՝ «Քրիստոնեայ Հայաստանին»
Դասարանի է՝
ՍԱՅՐ ԱՌՈՒՄ, ԷԼԵՄԵՆՏԱՆ ՏՊԱՐԱԼ
Անդրադրված է տպագրության 14. 05. 1999 թ.

Տղամանակ՝ 2000 Գին՝ 50 դրամ

ԽՆԴԻՎՈՒՄ ԵՒ ԹԵՐԹԸ ԶՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ։ ԿԱՐԱՆԱԼԻՑ ՀԵՏՈ ԱՅՆ ՏՎԵԹ ՍԵՎ ՈՒՐԻՇԻՆ։